Արձանագրություն N 3

«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/25» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստի

Ք.Գորիս, Գ.Տաթևացի 31

«04» «հուլիս» 2018թ
ժ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Լևոն Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Գաբրիելյան և Ասյա Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Տոռոզյան

1.«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/25 » ծածկագրով գնանշման հարցման գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը
(Լևոն Հարությունյան)

1.1. «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/25» ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018թվականի հուլիսի 4-ին, ժամը 11:30-ին, Սյունիքի մարզ, ք.Գորիս, Գր.Տաթևացի 31 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/25» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

2.1. «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/25» ծածկագրով գնանշման հարցման քարտուղարի կողմից 2018 թվականի հունիսի 28 -ին, ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է դրական եզրակացություն, մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3.«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/25 » ծածկագրով գնանշման հարցման 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին.
(Լևոն Հարությունյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են և համապատասխանում են որակավորման չափանիշներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Հանձնաժողովը որոշեց

(Լևոն Հարությունյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաղթող ճանաչել <Արևշատի Սարգիս> ՍՊԸ-ին 1,2,3,4,5,6 չափաբաժինների համար

4.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.3. Պայմանագրի կնքման նպատակով «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/25» ծածկագրով գնանշման հարցման հաղթող ճանաչված մասնակցին ներկայացնել մատակարարման պայմանագրի կնքման առաջարկ, անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Լևոն Հարությունյան)

5.1. **«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/25»** ծածկագրով գնանշման հարցման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր՝ կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, ***ք.Գորիս, Գր.Տաթևացի 31*** հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լևոն Հարությունյան

Անդամներ՝ _____ Լուսինե Գաբրիելյան

_____ Ասյա Հակոբյան

Քարտուղար _____ Կարինե Տոնոյան